ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿՆՇՎԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕՐԸ

ՈՒՐՎԱԳԾՎՈՒՄ Է ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի վերանվանման 90-ամյա հոբելյանին և քաղաքի ավանդական օրվան էր նվիրված քաղաքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցած տոնական միջոցառումների կազմակերպման հանձնաժողովի նիստը՝ քաղաքապետ, հանձնաժողովի նախագահ Սուրեն Գրիգորյանի ղեկավարությամբ:

Հանձնաժողովի կազմում ընդգրկված են քաղաքապետարանի պատասխանատու աշխատողներ և ավագանու անդամներ, մշակութային օջախների տնօրեններ, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության մասնագետներ, արվեստագետներ: Նիստում մասնակցում էր նաև ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը:

Ստեփանակերտի ավանդական օրը նշվում է հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթվա շաբաթ օրը: Այս տարի տոնական միջոցառումները կմեկնարկեն հոկտեմբերի 12-ին: Հատկանշական է, որ Ստեփանակերտի վերանվանման օրն այս տարի հոբելյանական է: Քանի որ նիստի ժամանակ թեժ քննարկումներ տեղի ունեցան մայրաքաղաքի վերանվանման 90-րդ տարեդարձի հետ կապված, հանձնաժողովի նախագահ, քաղաքապետ Ս.Գրիգորյանը պատմաբանորեն առաջարկեց ճշգրտել և հստակեցնել բնակավայրի՝ 5-6-րդ դարերում Վաչագան Բարեպաշտի կողմից Վարարակն բնակավայրի հիմնադրման մանրամասները:

Ստեփանակերտի օրվա տոնակատարությունները կսկսվեն մարզական մրցույթներով: Հոկտեմբերի 11-ին մայրաքաղաքի մշակույթի և երիտասարդական պալատում կկայանա հանդիսավոր ժողով, որտեղ մասնակիցների համար նախատեսվում է ցուցադրել նոր ֆիլմ՝ Ստեփանակերտի անցյալի և նեկայի մասին: Հանդիսավոր ժողովը կավարտվի համերգով:

Քանի որ հաստատված են մրցույթով ընդունված մայրաքաղաքի զինանշանն ու դրոշը, որոնք կզարդարեն բեմը, սակայն դեռ բացակայում է քաղաքի օրհներգը, որով ցանկալի կլիներ «բացել» հանդիսավոր ժողովը, հանձնաժողովը որոշեց միջոցառումը սկսել Արցախի օրհներգով: Միևնույն ժամանակ որոշվեց մայրաքաղաքի օրհներգի

համար մրցույթ հայտարարել, ընդգրկելով նաև ՀՀ-ի երգահաններին: Լավագույն արդյունք ունենալու նպատակով առաջարկվեց ստեղծել բարձր մասնագիտական հանձնաժողով: Այդ աշխատանքները ստանձնեց ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

Տոնակատարության կազմակերպիչները խոստանում են հագեցած և հետաքրքիր ծրագիր: Այդ օրը կկազմակերպվի լուսանկարչական ստեղծագործությունների ցուցահանդես, որտեղ կարտացոլվեն Ստեփանակերտի զարգացման փուլերը: Կազմակերպվի նաև հայտնի քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի անհատական ստեղծագործությունների ցուցահանդեսը, մանավանդ, որ տարին հոբելյանական է՝ կապված արցախցիների համար խորհրդանիշ դարձած «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի ծննդի հետ… Տարբերակներ են մշակվում Վաչագան Բարեպաշտի գործունեության հետ կապված բացօթյա բեմադրություն իրականացնելու ուղղությամբ: Տոնական տեսք ստացած մայրաքաղաքը բազմաթիվ հյուրեր կընդունի Հայաստանից և արտերկրից:

Հոկտեմբերի 12-ին տեղի կունենա ծաղկեպսակի տեղադրման արարողություն՝ Ստ. Շահումյանի հուշարձանին: Իր անվան պուրակում կկազմակերպվեն արցախցի նկարիչների ցուցահանդես-վաճառք, մշակութային այլ միջոցառումներ ու մարզական խաղեր: Այդ ամենը կուղեկցվեն «Պիտաչոկում» Ստեփանակրետի մշակույթի տան փողային նվագախմբի կողմից հնչեցված երաժշտությամբ, ինչպես նաև ազգային, միասնական շուրջպարով: Ծրագրված է անցկացնել դպրոցականների շարադրությունների մրցույթ: Տեղի կունենան այցելություններ՝ ԼՂՀ զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություններ, ԼՂՀ պատերազմի և աշխատանքի վետերանների միություն, «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» և այլն: Մայրաքաղաքի տարբեր թաղամասերում կկազմակերպվեն համերգներ, տոնական երաժշտության հնչյունների ներքո հատուկ զարդարված ավտոմեքենան կշրջի քաղաքով և շնորհավորանքներ կհղի Ստեփանակերտի օվա առթիվ՝ բաժանելով խորհրդանշական նվերներ…

Երեկոյան Հայաստանի և Արցախի արվեստի վարպետների մասնակցությամբ Վերածննդի հրապարակում տեղի կունենա տոնական համերգ: Հոբելյանական հանդիսությունները կավարտվեն տոնական հրավառությամբ: